ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.09.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2020/213

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 27.08.2020թ. թիվ 26/26-1/12916-2020 գրությամբ «Գրաֆենշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 27.08.2020թ. թիվ 061/9860 գրության հիման վրա, 27.08.2020թ. թիվ 26/26-1/12916-2020 գրությամբ նախաձեռնել է «Գրաֆենշին» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Գրաֆենշին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Գրաֆենշին» ՍՊԸ-ի կողմից, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ, գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/213 ընթացակարգի շրջանակներում 11.09.2020թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

3. <u>Վանաձորի համայնքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 27.08.2020թ. թիվ 061/9860 գրությամբ հայտնել է, որ Վանաձորի համայնքապետարանի կողմից 13.08.2020թ. հայտարարված «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ-20/92» ծածկագրով մրցույթի մասնակից՝ «Գրաֆենշին» ՍՊԸ-ի /ՀՎՀՀ 00126761/ կողմից ներկայացված հայտում արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ:

«ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ-20/92» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է հրավերի 1-ին մասի 8.9 կետի համաձայն մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը՝ մասնակցին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ «24» «օգոստոսի» 2020թ. ժամը 10:00-ն, շտկել անհամապատասխանությունները: «Գրաֆենշին» ՍՊԸ-ի կողմից արձանագրված անհամապատասխանությունները չեն շտկվել, ուստի ներկայացված հայտը մերժվել է հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/213 ընթացակարգի շրջանակներում 11.09.2020թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/213 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/213 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Վանաձորի համայնքապետարանի կողմից իր կարիքների համար Վանաձորի աթլետիկայի ՕՀՄՄ ՀՈԱԿ-ի ներքին վազքուղու կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ-20/92» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Գրաֆենշին» ՍՊԸ-ն:

2. Ընկերության կողմից Ընթացակարգին ներկայացված հայտում ներառված Հավելված 2-ը՝ գնային առաջարկը, հաստատված չի էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.08.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Գրաֆենշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում կցված հայտի ապահովումը սխալ է, թերի է լրացված հավելված 1.1-ը, բացակայում է մասնակցի կողմից լրացված և հաստատված ծավալաթերթը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նույն արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ մասնակցին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 24.08.2020թ. ժամը 10:00-ն, շտկել անհամապատասխանությունները:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 20.08.2020թ. armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով ուղարկվել է ծանուցում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նույն արձանագրության համաձայն՝ արձանագրված անհամապատասխանությունները «Գրաֆենշին» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չեն շտկվել և 24.08.2020թ. որոշում է կայացվել վերջինիս հայտը մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 27.08.2020թ. թիվ 26/26-1/12916-2020

գրությունը, Վանաձորի համայնքապետարանի 27.08.2020թ. թիվ 061/9860 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 11-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են

տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: ***<u>Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ,</u>*** իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ***հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, <u>կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:</u>*** Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Ընթացակարգի հրավերի (հետայսու նաև՝ Հրավեր) 1-ին մասի 8-րդ կետի 8.18-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի և (կամ) պատվիրատուի կողմից էլեկտրոնային ծանուցումներն ուղարկվում են համակարգի միջոցով, իսկ մասնակցի կողմից՝ իր հայտում նշված էլեկտրոնային փոստից սույն հրավերում նշված՝ հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով:

Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում մասնակիցը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հավաստագիրը պետք է զետեղված լինի «Նույնականացման

քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են <u>էլեկտրոնային թվային ստորագրությամբ</u>, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Հայտում ներառվող՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվող փաստաթղթերը չեն կնքվում:

Այսպես, Վանաձորի համայնքապետարանի կողմից Վանաձորի աթլետիկայի ՕՀՄՄ ՀՈԱԿ-ի ներքին վազքուղու կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ-20/92» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Գրաֆենշին» ՍՊԸ-ն:

ՍՑ-ՆԳ-2020/213 ընթացակարգի քննության ընթացքում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից պարզվել է, որ Ընկերության կողմից Ընթացակարգին ներկայացված հայտում ներառված Հավելված 2-ը՝ գնային առաջարկը, հաստատված չի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ***<u>այսինքն՝ Ընկերության հայտում ներառված Հավելված 2-ը՝ գնային առաջարկը, ներկայացված է Կարգի 32-րդ կետի 11-րդ ենթակետով և Հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.18-րդ ենթակետով սահմանված պահանջների խախտմամբ:</u>***

Ելնելով վերոգրյալից, գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն ի սկզբանե պետք է մերժեր «Գրաֆենշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը, այն է՝ ***<u>հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան,</u>*** սակայն, գնահատող հանձնաժողովը խախտելով Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջը, չի մերժել Ընկերության հայտը, փոխարենը Կարգի 41-րդ կետի համաձայն՝ մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը՝ Ընկերությանը ծանուցելով հայտում արձանագրված անհամապատասխանությունները, այն է՝ հայտում կցված հայտի ապահովումը սխալ է, ***<u>թերի է լրացված հավելված 1.1-ը,</u>***

բացակայում է մասնակցի կողմից լրացված և հաստատված ծավալաթերթը, շտկելու վերաբերյալ, որից հետո միայն՝ 24.08.2020թ, նշված անհամապատասխանությունները չշտկելու հիմքով մերժել է Ընկերության հայտը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Պատվիրատուի ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում խախտվել է Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջը, ուստի՝ նման պայմաններում հնարավոր չէ արձանագրել «Գրաֆենշին» ՍՊԸ-ի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման փաստը, հետևաբար գտնում եմ, որ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.08.2020թ. թիվ 26/26-1/12916-2020 գրությամբ «Գրաֆենշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**